Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի մայիսի 07-ի N 167-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի մայիսի 15–ից

# «All Airlines» արշավի իրականացման պայմաններ

## 1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 15.05.2025թ-ից 31.08.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Visa Platinum, Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition տեսակի քարտեր, որոնք արշավի ընթացքում կկատարեն ավիատոմսի գնում:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Քարտի քարտատեր:
1.4 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

## 2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 15.05.2025թ-ից 31.08.2025թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Visa Platinum, Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition տեսակի Քարտերի Քարտապանները՝ կատարելով ավիատոմսի գնում, կստանան 25% idcoin (հարկումից հետո):
2.2 Մեկ հաճախորդին սույն Արշավի ընթացքում տրամադրվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում հանրագումարային առավելագույնը 25 000 idcoin (հարկումից հետո):
2.3 Տուրիստական ընկերության կողմից գնված ավիատոմսերը չեն մասնակցում արշավին:
2.4 Ավիատոմսի գնման համար վճարվում է idcoin, եթե տվյալ ավիաընկերությունն ունի համապատասխան վճարային համակարգի բնորոշիչ (MCC):
2.5 Արշավը գործում է բոլոր ավիաընկերություններից ավիատոմսի գնման համար:
2.6 Յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում կատարված վճարումների համար idcoin-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված 20% եկամտահարկի գանձումից հետո: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:
2.7 Քարտապանների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.8 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: